



ՌՈՒՄԱՆԱՀԱՅՈՑ ՄՏՔԻ ԳԱՆՁԱՐԱՆ „ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆԸ“*)

ԱՅՑՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՐՄԻՔՆԵՐ



Եթե ռումանահայ մամուլը և Մատենադարանի ոսկեմատյանը ռառամնասիրելու ըլլանք, կտեսնենք որ այս հաստատությունը, իր համեստ պայմաններով, ոչ միայն հայ մտավորականին ու ընթերցողին օժախնէ եղած, այլ նաև բազմաթիվ օտարներ, հատկապես ռումեններ, այցելած ու հետազային ալ սերտ կապ պահած են այս հաստատություն հետ. եղած են նաև դեմքեր, որ իրենց աշխատությունց համար անսպառ աղբյուր նկատած են զայն:

«Ռումանահայ Կեդրոնական Մատենադարան»-ին հավատարիմ բարեկամ մնաց մինչև իր եղերական վախճանը մեծ հայագետ ու հայասեր, ռաուցչապետ Ն. Նորգան: 1928-ի մայիսին էր, որ առաջին անգամ նա այցելեց մատենադարանը և հոս ժամ մը անընդհատ պրպտումներով զբաղեցավ. ան իր հրատարակություններն մաս մը նվիրելով մատենադարանին, անոր ոսկեմատյանին Ա. էջին վրա ֆրանսերեն լեզուով զգացված դրեց սա տողերը. «Ի հիշատակ այցելությանս այս հարկին, ուր պարփակված է մտածումը տառապած ու փառավոր ժողովուրդի մը: Ու որքան պիտի հրճվեր մեծ հայագետը, եթե իրեն վիճակված ըլլար տեսնել նաև բացումը «Հայ Մշակույթի Տան», ուր փոխադրվեցավ իր-նախկին համեստ հարկեն անոր կողմն այնքան սիրված Ռումանահայ Մատենադարանը հայ արվեստի ու հայ անցյալի իր թանկագին նշխար-

ներով հանդերձ: Համաշխարհային համաքալի տիրացած այս գիտնականը, որու գրչին կպատկանին 1300 գործեր ու 25000 հոդվածներ սփռված աշխարհի շորս ծայրը լույս տեսնող թերթերուն մեջ, գերման ֆաշիստներու կողմն վարձված ռումեն լեզունականներն վատաբար կսպանվի 1940-ին, խոր սուգի մատնելով ամբողջ Ռումանիան:

1929 թվին Մատենադարան այցելեց տոթթ. Քրուշեանո գիտուն քահանան, որն Մատենադարանի մեջ պատրաստեց իր դոկտորական աշխատանքը, աշխատություն մը գրելով հայ եկեղեցվո պատմության շուրջ^{*)}: 1935 թվին կայցելե հայագետ փրոֆ. Վլաս Պընըցեանուն, որն ոսկեմատյանի մեջ գրած իր տպավորությունց մեջ արդեն կշեռտե ավելի մեծ դանձարան մը ստեղծելու անհրաժեշտությունը: Փրոֆ. Պընըցեանու կգրեր. «Հիացումով դիտեցի հայկական Մատենադարանի մեջ բոլոր այն նյութերը, որոնք մեզ կհիշեցնեն հայոց մշակույթն ու անցյալի մեծ պահերը և ի մասնավորի մեր երկրի մեջ ապրող հայոց պատմությունը... Եթե իսկապես հայերը իրենց ազգին ու դեղեցիկ և փառահեղ անցյալին վրա կգուրգուրան, այն ժամանակ ամեն միջոցով պետք է ճոխացնեն մատենադարանը ու ստեղծեն թանգարան մը: Այլապես մեր դարու աններող ժամանակը, որ նկատի չառնեք երբեք ան-

*) Gr. Cruceanu Preot.— Privire generala asupra Bisericeii Armeane pana la Sinodul al IV-le eumenic, Bucuresti, 1936

*) Տե՛ս սկիզբը «ԷՋՄԻԱՍՆ» մայիս-հունիս 1948 թ.

ցյալի հետքերու արժեքը, շուտով պիտի ուշերնացնեն ամեն ինչ, իսկ հայերը այլևս հրեանարավորություն չպիտի ունենան իրենց զավակներուն ցույց տալու բոլոր այն առարկաները, որոնք իրենց համար մտամբարկման ու հարգանքի բարձր պատճառներ էին և միևնույն ժամանակ ազգային պարծանքի և ոգևորման պահեր: Փրոֆ. Պընը-

ցեանուի բաղձանքը շուտով պիտի իրականանար:

Հայ այցելուներին հիշենք Պոլսո նախկին պատրիարք հանդուցյալ Զավեն արքեպիսկոպոս Տեր-Նդիայանը, որ 1928-ին այցելած է: 1939-ին այցելած է Սիրոն վրդ. Մանուկյան (այժմ եպիսկոպոս) և շատ ուրիշներ:

ԳԱՍԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ռուսմանահայ Կեդրոնական Մատենադարան»-ի հիմնադրության շրջանին տեղի կունենան նաև դասախոսություններ ու հուշերի երեկոներ, ինչպես նաև կսարքվին գրական երեկոյթներ. սույն հիմնադրության նախաձեռնությամբ ու Պուրբեշահայ բոլոր միություններու աջակցությամբ կսկսի տոնվիլ «Հայ Մշակույթի օր»-ը: Հաճախ հերթական դասախոսություններուն, իբր դասախոս, իրենց մասնակցությունը կբերին նաև ռումին ու այլ բարձրաստիճան անձնավորություններ: Ասոնց կողմն տրված դասախոսություններն հիշենք «Հայ կին գրող

Սրբուհի Տյումար»-ի մասին 1931-ին կարդացված դասախոսությունը, 1937-ին՝ «Մանուկ պեյ իբր դիվանագետ», ավելի ուշ՝ «Հայ իրավունքի մասին», և շատ ուրիշներ:

«Ռուսմանահայ Կեդրոնական Մատենադարան»-ը իր հաստատության մեջ կազմակերպեց նաև զանազան հյուրասիրություններ, որոնցմե առաջինը տեղի ունեցավ 1930-ին ի պատիվ մեծանուն հայագետ փրոֆ. Ն. Նորգայի, անոր կողմն հայ անունը Սորպունի և Պուրբեշի ազգային թատրոնների բեմերին պանծացնելն հետք: Հյուրասիրություն մ'ալ սարքվեցավ ի պատիվ փրոֆ. Վլատ Պընըցեանուի:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ռուսմանահայ Կեդրոնական Մատենադարան»-ը, ըլլա իր ստեղծման սկզբնական շրջանին կամ ավելի ուշ, երբ կհիմնադրվի «Հայ Մշակույթի Տուն»-ը, միշտ ալ ջերմապես փափաքած է մնալուն գրական-բանասիրական պաշտոնական հանդես մը հրատարակել և մատենաշար մըն ալ հիմնել, սակայն այս բոլոր ծրագիրներն ալ ինչ ինչ պատճառներով չեն իրականացեր. միայն

1928-ին, Թարգմանչաց տոնի օրը, երբ Մատենադարանի հիմնադրության ալ տարեդարձն էր, լույս կտեսնե «Հայ Մշակույթի Օրը» անուն 8 էջոց պարբերական մը՝ ճոխ բովանդակությամբ, որ հետագային իր հաջորդներն ալ պիտի ունենար, սակայն կարելի չեղավ գեթ տարին մեկ թիվ իսկ լույս ընծայել: 1944-ին, «Հայ Մշակույթի Տան» բացումին առթիվ, լույս ընծայվեց պատկերազարդ ցուցակ մը՝ 110 էջերէ բաղկացած:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՅՆՈՒՄ

Դեռ 1928-են սույն հաստատության վարչության ժողովներուն մեջ ծնունդ կառնե Հայ Արվեստին նվիրված ցուցահանդեսի մը կազմակերպման գաղափարը. այս բանը շուտով իրականություն կդառնա 1930-ին, երբ փրոֆ. Ն. Նորգայի նախագահությամբ ռումանահայ գաղութը շքեղ կերպով կցուցադրե հայ արվեստի նշխարները, պանծացնելով հայու անունը: Ցուցահանդես կայցելեն նաև ռումին ու օտար բարձրաս-

տիճան հյուրեր, որոնց մեջ երկրին երբեմնի վեհապետը ևս: Ռումին մամուլը միաբերան այս առթիվ երկար ժամանակ գովքը հյուանց հայ արվեստին:

«Ռուսմանահայ Կեդրոնական Մատենադարան»-ի վարչության նախաձեռնությամբ տեղի ունեցավ նաև «Հայ Մշակույթի Բարեկամներու Ընկերակցութեան» հիմնադրումը, որուն նախագահը դարձյալ փրոֆ. Նորգան էր: Այս ընկերակցությունը պարբերաբար

շքեղ հանդեսներ կազմակերպեց, ի մասնավորի Վլեննի տե Մունթեի մեջ, ուր անխոնջ տքնությանց առաքյալ Նիքոլա Նորգան ուսման տաճար մը ստեղծեց էր, ամառային

արձակուրդին իր շունչով սերունդները թրծելու և գյուղը լուսավորելու համար. հոս էր, որ մոտ կապ մը ստեղծվեցավ հայ և ռումին ժողովուրդի ու մտավորականության միջև:

«ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ»

Գիրքերով ու թանկարժեք իրերով շարունակ ճոխացող և իր ծրագրված գործունեության մը ընդլայնվող «Ռումանահայ Կեդրոնական Մատենադարան»-ին համար այլևս շատ նեղ կուգար Միսաքյան-Քեսիմյան դպրոցին մեջ գտնվող իր սրահը. ինչ կվերաբերեր հարևան շենքին, որը երկրաշարժին բոլորովին վնասվել էր ու իր մեջ զետեղված եկեղեցական թանգարանն ալ փոշիներու տակ էր մնացեր, ան ալ արդեն պատանդներու համար խաղասենյակ մը կծառայեր: Ուրեմն անհրաժեշտ էր մտածել նոր շենքի մը կառուցման մասին և շուտով, շնորհիվ Հովսեփ Տուտյանի նվիրատվության, իրականանալ սկսավ Մատենադարանի վարիչներու ու գրադարներու այս փափաքը:

Պուրբեշի առաջին հայկական վարժարանի հիմնադրության 125-ամյակի օրը ռումանահայության համար նշանակալից օր հանդիսացավ: Այդ օրը Պուրբեշում հիմը դրվեց ազգային թանգարան-մատենադարանի նոր շենքին, որ պիտի կրեր «Տուտյան Հայ Մշակույթի Տուն» անունը: Հիմերու օծման կրոնական արարողությունն վերջ, որուն կնախագահեց հանգուցյալ Հուսիկ արքեպիսկոպոս, հաջորդեցին բազմաթիվ ճառեր: Շենքին նախագիծը գծվեցավ ճարտարապետ Էմիլ Քրլինեսքուե և աշխատանքները կատարվեցան Աուրել Եռանովիչ ընկերության կողմե. շենքին կառուցմանը կհրսկեր ճարտարապետ Հ. Կոմիկյանը:

«Հայ Մշակույթի Տուն»-ը, իբր իր հիմնադրության նպատակ, որդեգրեց հետևյալ ըսկզբունքները. — Ա. զարկ տալ հայ մշակույթի ծաղկմանն ու տարածմանը, Բ. օտարներին ծանոթացնել հայ արվեստի ու մշակույթի հետ և ամրապնդել հայ ու ռումին ժողովուրդներու կուլտուրական կապերը: Սույն նպատակներին հասնելու համար «Հայ Մշակույթի Տուն»-ը պետք է ա) ճոխացնե ու ծաղկեցնե Ռումանահայ Կեդրոնական Մատենադարանն ու թանգարանը, բ) կազմակերպե ասուլիսներ, դասախոսություններ ու դասընթացներ, գ) հրատարակե մատենաշար մը և ի հարկին պարբերական մը

հայ-ռումին կամ այլ օտար լեզուներով, ինչպես նաև սահմանե գրական մրցանակներ, դ) կազմակերպե գրական-գեղարվեստական հանդեսներ, երաժշտական համերգներ, և տոնախմբություններ, ե) սարքե ցուցահանդեսներ:

Շենքին հիմնարկեքն տարիներ հետո, երբ ավարտվեցան ինչպես շենքին, այնպես ալ անոր մեջ գույքերու զետեղման աշխատանքները, 1944-ին տեղի ունեցավ Տան հանդիսավոր բացումը: Բացումն մեկ քանի ամիս առաջ շենքին նվիրատուն՝ Հ. Տուտյան, երկար հիվանդութենն մը վերջ, կնքեր էր իր մահականացուն, առանց շենքին ավարտումը տեսնելու: Հանդեսի բացումը կատարեց «Հայ Մշակույթի Տան» վարչության նախագահ, արվեստի քննադատ Գր. Զամպաքճյանը, և ուրիշներ. հանդեսի գեղարվեստական բաժինն հետո ներկաները դիտեցին Տան զանազան բաժինները:

1944-ի օգոստոսի 23-են սկսյալ, երբ Սովետական հաղթական թանակները ազատագրելով Ռումանիան փրկեցին հոն ապրող հայերը, որոնց պահ մը փորձեր էր աքսորել Անթոնեսքուի ֆաշիստական կառավարությունը, «Հայ Մշակույթի Տան» համար գործունեության նոր շրջան սկսվեց. ընթերցարանը վերածվեցավ Հայրենիքեն՝ Սովետական Հայաստանն ստացված թաղ գրականության նոր աշխարհի մը: Այսպիսով գաղութահայ ընթերցողները տեղյակ էին դարձվում Սովետական Հայրենիքի բարգավաճմանն ու վերելքին:

«Հայ Մշակույթի Տան» վարչության նախագահությունը վարեցին 1944-ի հիմնադրության շրջանին՝ Գր. Զամպաքճյան, 1944—1946-ին տոթթ. Ա. Սալբի, 1946—1948-ին Տ. Վազգեն վարդապետ Պալճյան: Վարչության կից 1944—1947 տարիներուն սա տողերը գրողին ղեկավարությունը կգործեր շուրջ 17 երիտասարդ-երիտասարդուհիներ բաղկացած Մատենադարանի Հանձնախումբը, որը շարունակական որոշ դեր ստանձնած էր Մատենադարան

նի զրբերի դասավորման, պահպանության, տեխնիկական դանադան աշխատանքների կատարման, հանդեսների կազմակերպման գործերուն մեջ: Մատենադարանի առօրյա ձրի կերպով կատարվող աշխատանքներուն զուգընթաց Հանձնախումբը զբաղվեց նաև երիտասարդության ինքնազարգացման խնդիրներով ու իր համեստ ուժերով կարողացավ հայ լեզուն, մշակույթը մատչելի դարձնել շարք մը գրեթե ձուլման ենթարկված երիտասարդներու, որոնք հետագային պատշաճ առիթներով հայերեն դասախոսություններ ալ կկարդային:

«Հայ Մշակույթի Տուն»-ը բազմաթիվ այցելուներ ունեցած է թե բացման առթիվ և թե անկե ետքը:

1946-ին այցելեց ու հոս հյուրասիրվեցավ Տ. Երոնիմ ուսա արքեպիսկոպոսը: 1947-ի հունիս 8-ին հայ համայնքը և «Հայ Մշակույթի Տուն»-ը մեծ շուքով ընդունեց այցելուները Մոսկվայի ու համայն Ռուսիո Պատրիարք Ն. Ս. Ալեքսի: Ն. Սրբույանը կուղեկցեին Լենինկրատի և Նովկոռոտի Ս. Միտրոպոլիտ Գրեգորին, Վիտալի արքեպիսկոպոսը և ուրիշներ: Անոնք դիտեցին Մատենադարանի դանադան բաժինները ու հայկական ձեռագիրները: Ն. Ս. Ալեքսի Պատրիարք հաստատության ոսկեմատյանին մեջ սա տողերը գրեց. — «Շատ ուրախ եղա այցելելու համար հայոց շատ գեղեցիկ եկեղեցին ու Հայ Մշակույթի Տունը: Կհայցեմ աստուածային օրհնություն հոգևորականության և ամբողջ հավատացյալ համայնքին վրա»: «Հայ Մշակույթի Տան» Մատենադարանը այցելեցին 1944-ին նաև Պուրբեշի Սովետ դեսպանատան ավագ քարտուղար Ս. Տոնկուլով, 1945-ին Սովետական Միության Ճարտարապետներու միության փոխ-նախագահ, ճարտ. Կ. Հալաբյան, ճարտարապետ Ամիրխանյանի հետ միասին: Նույն տարին այցելեց ռումանահայ կաթողիկե թեմի առաջնորդ Գեորգ. Հ. Լենկել Զուլթան՝ Պուրբեշի ժողովրդապետ Հ. Խ. Կղեմեսյանի հետ միասին: 1946-ին այցելեց ՀՍՍՌ Ներգաղթի կոմիտեի նախագահ տղթ. Բ. Աստվածատույան, ինչպես նաև Ռումանիայի ներգաղթի լիազորները Չարչյան, Մուրադյան ու Սովետական դեսպանատան հյուպատոս Ս. Էլչիբեկյան: 1947-ին այցելեց Ն. Ս. Անթիմ Նիբա՝ Պուրբեշի Արքեպիսկոպոսը: 1945-ին այցելեցին կաթողիկոսական ընտրության մասնակցող պատվիրակներ Տ. Մամբրե կաթիսկոպոսը, Տ. Սիոն և Տ. Տիրան վարդապետները (այժմ կաթիսկոպոսներ), Պ. Սեւյան և ուրիշներ:

Այստեղ արժե հիշել «Հայաստանեան Ճակատ»-ի կողմն կազմակերպված Սովետական Հայաստանի պանծալի 25-ամյակի տոնակատարության մասին, որ մեծ շուքով տեղի ունեցավ Սթալա հոյակապ սրահին մեջ՝ 3.000 հայերնասերներու ու բարձրատիճան հյուրերու ներկայությամբ: Այդ 1945-ի նոյեմբերի 29-ին էր, որմե հետո գիշերը «Հայ Մշակույթի Տան» մեջ 150 հրավիրյալներու ներկայությամբ փայլուն ընդունելություն մը սարքվեցավ: Աննախընթաց երեկո մըն էր, երբ գրեթե ռումեն կա-



«Հայ Մշակույթի Տան» արտափին պատի զարդաբանդակի նմուշ

ռավարության ամբողջ կազմն ու սովետական բարձրատիճան անձինք այդքան երկար մնացին, քան որևէ երեկույթի ատեն: Իրենց ներկայությամբ երեկույթը պատված էին Սովետական դեսպան Տեր և Տիկ. Քավթարաձե, զոր. Սուալկով՝ Դաշնակից Հակախոհի Հանձնախումբի տեղակալ, զոր. Վինոկրատով, դեսպանատան խորհրդական Յակովլև, Տեր և Տիկ. Տոնկուլով, ՏԱՍՍ գործակալության թղթակիցներ և այլն: Ռումեն կառավարության կողմն ներկա էին վարչապետ Պ. Գրոզա, նախարարներ Գեորգիու Դեթ, Թեոհարի Ճեորճեսքու, փրոֆ.

վլ. Ռեքոսաս, փոխ-նախարարներ և այլք: ներկա էին նաև Պոլկարիո դեսպան Սալա Կանովսկի, օպերայի և ռադիո-ժուռնալի տնօրենները, ռումեն թերթերու խմբագիրներ և այլն: Ծառեր արտասանեցին զոր. Սուսայկով, վարչապետ տոթթ. Պ. Գրոզա, պոլկար դեսպան Կանովսկի, Տ. Վադզեն վարդապետ և «Հայաստանեան Ճակատ» կազմակերպության ընդհանուր քարտուղար Հ. Պապոյան: Վարչապետ Պ. Գրոզա Սովետական Հայաստանի կենաց-բաժակը բարձրացնելով և պահ մը իր հայացքը սրահը զարդարող հնադարյան սքանչելի վարագույններուն դարձնելով գովքը հյուանք Սովետական Հայաստանի վերելքին ու հայ չքնաղ արվեստին:

«Հայ Մշակույթի Տան» մեջ է, որ դարձյալ կկազմակերպվին դասախոսություններ, հանդեսներ, կգումարվին կոնգրեսներ, ժողովներ և այլն: Անոր թանգարանի սրահին մեջ էր, որ վարչության անդամներու օժանդակությամբ կազմակերպվեցավ Սովետական Հայաստանի նվաճումներու պատկերահանդեսը, որուն նկարները ստացվել էին Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության միջոցով, և որը բացառիկ հաջողություն ունեցավ: «Հայ Մշակույթի Տուն»-ը սատարած է նաև Ռումեն-Սովեթ բարեկամության ընկերության

ցուցահանդեսը, մասնակցելով անոր Սովետական Հայաստան հրատարակված գրքերու շարք մը ցուցադրելով: «Հայ Մշակույթի Տուն»-ը մասնակցած է նաև Պոտաբեշի ցուցահանդեսին:

«Հայ Մշակույթի Տուն»-ը ամեն տարի կկազմակերպե Մշակույթի օրվան նվիրված հանդես, ինչպես նաև հերթական հանդեսներ ու դասախոսություններ:

1945-ին Տան վարչության նախաձեռնությամբ և կարգ մը նվիրատուներու փափաքով կազմակերպվեցան մրցակցություններ: Առաջինը տեղի ունեցավ նկարիչներու մրցակցությունը, որուն մասնակցեցան ռումանահայ կարգ մը նկարիչներ: Ժյուրին կազմված էր ծանոթ նկարիչ ու ուսուցիչ Սթերիատիև և ուրիշներե: Առաջին տեղը գրավեց նկարիչ Արամիկը (ներկայիս հայրենադարձ), երկրորդ տեղը՝ Լույիա Ներսես-Թիմուրյանը և երրորդ տեղը՝ Չիգ Տամատյանը: Զուգընթաց տեղի ունեցան նաև գրական մրցակցություններ. մանկական գրականության ասպարեզում առաջին տեղը գրավեց տոթթ. Ա. Սալբին, արձակի և չափածոյի ասպարեզում առաջին տեղերը գրավեցին Եդ. Քուլանճյան, Զ. Պապուկ և Հորիոն, իսկ հայագիտական աշխատությունների ասպարեզում՝ Ն. Պալյան:

«ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ»

Ա. ՀԱՅՆԵՆ ԶԵՆԱԳԻՐՆԵՐ

Ճիշտ է, թեև «Հայ Մշակույթի Տան» մեջ դոմիլոդ թվով 150 ձեռագիրները ուրիշ ձեռագրական հավաքածոներու բաղադրամաս բացառիկ արժեք մը չեն ներկայացներ, բայց և այնպես Պուրբեշի ձեռագրատունը հպարտ զգալու իրավունք ունի, քանի որ իր մեջ խմբված են Ռումանիո մեջ ցրված հայ ձեռագիրներու կեսը. դարձյալ հոս է, որ կը պահվի Ռումանիո մեջ դոմիլոդ ամենահին ձեռագիրը՝ գրված 1265-ին և վերջապես այս համեստ ձեռագրատունը իր ձեռագիրներու մանրանկարչական զարդերով ու այդ ձեռագիրներու ոմանց հիշատակարաններու պատմական արժեքով անսպառ նյութ կարող է մատակարարել մանավանդ այն գիտաշխատողին, որը կփափաքի ռումանահայոց և հարևան հայ գաղութներու պատմությամբ զբաղիլ:

Հիշատակության արժանի են մանավանդ հետևյալ ձեռագիրները. *)

*) Ս. Ե. Քուլանճյան. — Մայր Ցուցակ հայերեն ձեռագրաց Պուրբեշի «Հայ Մշակույթի Տան» մատենադարանի (անտիպ):

ՄԱՏՆԱԳԻՐԱՆԻ ԲԱԺԻՆ


Ա. ՀԱՅՆԵՆ ԶԵՆԱԳԻՐՆԵՐ

1. Ավետարան. — գրված Հայոց ՉԺԴ թվականին (=1265), $14 \times 19 \times 6$ սմ մեծությամբ. գրված է Կիրիկիա, Մաշկետր վանքին մեջ, Կիրակոս սարկավագե, Թեոդոս փակակալի խնդրանքով: Կազմված է Առաքել Հնազանդեցիի կողմից դարձյալ 1265-ին: Ինչպես հիշատակարանը կրսե, գրված է — «Ի թագաւորութեան Հեթմայ աւծեալ ի վերայ նահանգին Կիրիկիոյ...»: Պատկանած է Ռուման քաղաքի հայոց եկեղեցվուն:

2. Ծաղոց. — գրված 1313—1331 թվականներուն, $24 \times 33 \times 8$ սմ մեծությամբ. գրված է Կարապետ քահանայի, Երուսաղեմի մեջ, Ասլեր տիկինի համար: Ինչպես հիշատակարանը կվկայե, գրված է Օշին թագավորի օրոք: Զեռագիրը կազմված է Ստեփանոս դպիր Կամենիցիի կողմից 1687 օգոստոս 1-ին, Թրանսիլվանիո Սեն Միքլոշ (Ճուրճով = Գեորգիեն) քաղաքին մեջ: Պատկանած է Սուշավայի հայոց թաղականության:

3. Ավետարան. — գրված 1351-ին, $17 \times 24 \times 6$ սմ մեծությամբ, Կաֆայի (Ղրիմ)

մեջ, Կարապետ քահանայի, Գրիգոր սարկավազի համար: Վերջին սեփականատեր Հակոբջա և Առյուծ կոչված եղբայրներու կողմի 1451-ին նվիրված է Յաշի Ս. Աստուածածին եկեղեցվուն: Այս ավետարանը նուրբ մանրանկարներ, խորաններ, թղշաղիր սկզբնատուներ ու լուսանցազարդեր ունի: Կազմը ձեռագրատան մյուս բոլոր ձեռագիրների կազմերին կտարբերի ու ամենաբնութիւն է, նա արծաթապատ ու ոսկեզօծված է, երկու կողմերը զիրար միացած են



Հիշատակարան 1265 թ. Կիլիկիա գրված
ձեռագիր Ավետարանի
(«Հայ Մշակույթի Տուն»)

երեք արծաթյա լայն հյուսքերով. Ա. կողմին վրա փորագրված է Աստուածամայրը Հիսուսը գրկին, վերը կա երկաթազիր հայերեն արձանագրություն, իսկ ետևի կողքին հարուստ տեսարանը: Ռումեն գիտնական մը՝

Դան Սիմյոնեսցու, որ ուսումնասիրած է այս ձեռագիրը ավետարանը, իր աշխատության մեջ^{*)}, խոսելով անոր կազմին մասին, կըսե որ թեև արծաթապատ կողմին վրա հայերեն է գրված, սակայն ան ուսումնական XV և XVI դարերու արծաթյա կազմերու հատկանիշներն ունի, ներկայացնելով ուսումնական բազմաթիվ ավետարաններու վերայի տեսարանները: Դան Սիմյոնեսցու շատ հավանական կգտնե, որ այդ ձեռագիրն արծաթյա կազմը, ինչպես հիշատակարանին վերջի մասին ալ հայտնի կդառնա, 1451-ին Յաշի եկեղեցվուն նվիրելու առին շինված պետք է ըլլա Մոլտավիո հողին վրա XV դարուն, ուսման երկրին մեջ սովորական դարձած կազմերու օրինակին հետեւելով: Մանրանկարներու մասին Դան Սիմյոնեսցու կըսե. «Քննելով մանրանկարները կտեսնենք» որ Կաֆայի ԺԴ դարու դպրոցը չի ներկայացներ հայ մանրանկարչության արվեստի անկումը, այլ դատելով Յաշի պատկանող այս ավետարանին, ան կը ներկայացնե պայքարը ավանդապաշտ հոսանքին ու օտար ազդեցությանց, որոնց մեջ պարտադրվեցին ստեղծագործելու հայերը: Ռումեն հողերու վրա հայոց ապրած կյանքին ընթացքին սլավոն-ռումեն մանրանկարչական հին արվեստը ծաղկեցավ հայկական այս օրինակներուն կից և սրանք այնքան տարածված էին Մոլտավիո իրենց եկեղեցական կեդրոններուն մեջ» որ փոխաբերական ազդեցությունները պետք է ուսումնասիրվին ավելի ճոխ աղբյուրներու հիման վրա»:

4. Ճաշոց. — գրված 1459—1460-ին, 22×32×11 սմ մեծությամբ. գրված է Աքքերման, Նիկողայոս եպիսկոպոսի կողմի: Պատկանած է Մոլտավիո թաղականության: Ունի բազմագույն ու նրբաճաշակ թղշաղիր լուսանցազարդեր և ճաշակավոր երեք խորաններ: Դրիչը իբր իրեն օգնականներ կհիշե «զյակոբ արեղան, որ զթուղթս կոկեց, զյակոբ երէց, որ զտողն քաշեց, զստեփանոս արեղան, որ ծաղկելուն ընկերեց և այլ ձեռնատուացն»: Գրված է Կյուրեղի ցանկության մը Յաշի Ս. Աստուածածին եկեղեցվուն համար: Հիշատակարանը իսկապես հանգավոր ոտանավորի մը գեղեցկություն ունի, միացած գրիչին նկարչագեղ լեզվին հետ. ահա նմուշ մը անկե (թերթ 263, էջ 526)

Յաշի հրաշափառ մեծ տոնիս
Քեզ երանի որ հանդիպիս,
Լուսավթիթ բուրաստանիս,

*) Dan Simionescu. — Evanghelia Armeana din Jasi (1851), Bucuresti 1941:

Հոգիաբուն սրբոյն տառիս,
Յորժամ ի ծունր խոնարհիս
Սիրով հոգւոյդ յԱստուած հըպիս
Յայնժամ յիշես դու զեղկելիս,
Զայս անպիտան աղքերմանցիս,
Զմեղաւք ծածկեալս ի մէջ տղմիս,
Նիկողայոս եպիսկոպոսիս
յիննհարիւր և ութ թվին....:

Հակառակ նվիրատւին փափաքին, այս ձեռագիրը երկար ժամանակ Յաշ շմնաց, քանի որ բուն գրչին հիշատակարանն վերջ կհաջորդէ 14 էջնոց հավելված մը, որուն վերջի հիշատակարանին մեջ կհիշվի Տեր

6. Մաշտոց.— գրված 1565-ին, $13,5 \times 18 \times 3,5$ սմ մեծությամբ: Հիշատակարանը կիսով չափ պատուված է, գրիչը, ստացողն ու հեղինակը անհայտ են:

7. Կանոնագիր.— գրված 1621-ին, $16 \times 20 \times 6,5$ սմ մեծությամբ. գրված է Գրիգոր քահանայի կողմէ, Կամենիցի (Լեհաստան) մեջ:

8. Ավետարան.— գրված 1649-ին, $18,5 \times 21 \times 7$ սմ մեծությամբ. գրված է Հովհաննես քահանայի կողմէ Սուլավայի մեջ Խոճա Քրիստոսատուր Թոխաթեցիի համար, զոր նվիրած է քաղաքի Ս. Երբորդուբյուն



Ձեռագիր Ավետարան գրված 1351 թվին Կաֆա
(«Հայ Մշակույթի Տուն»)

Աստուածատուր, որդի Տեր Հովհաննեսի, որ թվականին ՌԿԷ (= 1618) Սեշով (Սուլավա) քաղաքին մեջ բազում աշխատանք այդ մնացած պակասը կըրացնէ: Ու այսկէ վերջ, մինչև 1927 թվականը, ավելի քան 300 տարի կմնա Սուլավայի մեջ, ուրկէ ալ կփոխադրվի Պուրբեշ:

5. Մաշտոց.— գրված 1555-ին, $15,5 \times 20 \times 3,5$ սմ մեծությամբ. գրված է Լվով (Լեմպերկ), Ներսես քահանա արճեշեցիի կողմէ: Պատկանած է Սուլավայի թաղականության:

եկեղեցիին: 1649-ին գրված այս ձեռագիրը կարմիր թավշապատ ու արծաթապատ է, ունի նուրբ և գունագեղ շորս խորաններ և թռչնազարդ սկզբնատառեր ու լուսանցքազարդեր: Գրիչը իր հիշատակարանի վերջը կգրէ. «Բայց յորժամ գրեցաւ սուրբ աւետարանս էր թիւ հայկազեան տոմարի Ռ. Ղ. Ը. գրեցաւ ընդ հովանեաւ սրբոյն Սիմէոնի ի հայրապետութեան հայոց տան Տէր Փրկիպոսի և յառաջնորդութեան յայսմ նահանգիս Տէր Մինաս վարդապետին...»:

Այս այն Մինաս Զիլիֆտար Օղլու կոչեցյալ

հայկական է, որ Մուտավիտ Գեորգե Տուրա իշխանի 1672-ին հայոց դեմ սկսած հալածանքին պատճառով, Մուտավիտյան ու մանավանդ Սուշավիտյան բազմաթիվ հայեր գաղթեցուց՝ մի մասին դեպի Լեհաստան, իսկ մեծագույն մասին ալ իր առաջնորդությամբ դեպի Թրանսիլվանիա^{*)}, որուն Միքայել Արաֆի իշխանը հրավիրած էր զիրենք իր երկիրը ու շատ մը ազատություններ ալ շնորհած։ Հոս է, որ ավելի ուշ Ավքսենտիոս Վրդարյան, որ Թրանսիլվանիո հայ կաթողիկե թեմին առաջին առաջնորդը ու Կեռա հայաքաղաքին հիմնադիրը եղավ, 1684-ին Հոռմեն, իբր առաքելական քարոզիչ, Թրանսիլվանիա անցեր էր Մուտավիտյան հոն գաղթող հայերը կաթողիկացնելու առաքելությամբ։ Հոս էր, որ նրա այս դիտավորությունը ամենեն ավելի ընդդիմացավ Մինաս Զիլիֆտար Օղլու հայկականությանը։ Դավթիկյան իր դրքին մեջ կգրե. «Վերջապէս իր աշխատութիւնը (Ավքսենտիոսի մասին է խոսքը) վարձատրուեցաւ, այնպէս որ նոյնիսկ անոնք, որոնք իր ամենէն մեծ թշնամիներն էին, ի մէջ այլոց Մինաս, քահանայից բազմութեամբ մը յայտնեցին իր առջև թէ ուղղափառ եկեղեցին դառնալու կը փափաքին»^{**)}։

1686-ին, ըստ Լեմպերկի վարդան Հունանյանի եվդոկիացիներուն ուղղյալ թուղթի մը, Մինաս Զիլիֆտար Օղլու Պուլտանու (Մուտավիտ) հայկականությանը «եկն ընդիս ի Լեօպոլիս, ի դառնալ իմում» և առաջին կարգին արին Փալլավիչինի Լեկարի փափին, աւար զդատաստանութիւն հաւատոց կաթողիկէի ...^{***)}»։ Երկու տարի վերջ, ըստ Ստեփաննոս քահանայի ժամանակագրության, Մինաս հայկականությանը կվախճանի։ Գրիչը անոր կարգացնե, իբրև ճգնակյացի^{****)}։

9. Հայսմավուրֆ. — գրված 1633—1655-ին, 27,5×39,5×13 սմ մեծությամբ. գրված է Կաֆայի մեջ, կղզու ավելի քան 10 կիլոգրամ ու բոլոր մյուս ձեռագիրներն ամենածանրն է. մեծ մասամբ Մինաս, իսկ մասամբ ալ Պարսամ անուամբ գրիչներու կողմն գրված է. ասոնցմե առաջինը ինքզինքը «տխմար» և «փծուն» կանվանե. ծաղկողն ու կաղմողը եղել է Նիկողայոս դպիրը։ Հիշատակարանի թվականը կապակի, գրված

է Փիլիպոս կաթողիկոսի օրոք (1633—1655). ստացողն է կաֆայցի Դեմիր, որ նվիրած է Յաշի Ս. Գր. Լուսավորիչ եկեղեցվուն։ Սույն եկեղեցին, ըստ իր դռան վրա եղած արձանագրության, 1616-ին կառուցված էր. 1828-ին Յաշի մեծ հրդեհին ատենը հրո ճարակ եղած է, որմէ վերջ քաղաքին հայերը զայն քանդելով սկսած են վերստին կառուցել, երկու կողմերն սենյակներ ավել-



Ճաշոց — գրված Աֆֆերման 1460-ին
(«Հայ Մշակույթի Տուն»)

ցնելով իրական սեռի կրթության հատկացնելու համար^{*)}։ «Հայ Մշակույթի Տան» Մատենադարանը կգտնվի Գ. Ասաքիի տղաբանը տպված հանգանակության թուղթ մը սա վերնագրով. «Մտորագրութիւն վասն շինութեան յնաջ քաղաքի դպրոցի միոյ օրրիորդաց և մատրանն յանուն Սրբոյն Գրիգորի Լուսավորչին, ընդ բարեսէր գործակալութեան Տեառն, անուոնք, ոսկի և այլն»։ Սակայն դրամի և վարժարան հաճախող աշա-

*) Lukaacsi.—Historia Armenorum Transilvaniae Viena 1859, p. 66:

**) Զ. Գր. վ. Դավթիկյան. — Դրանսիլվանիոյ Հայոց մեարապոլիսը կամ նկարագիր Կեռա Հայաքաղաքին, Վիեննա 1896, էջ 118-119:

***) Զ. Ղ. Ալիշան. — Կամենից, էջ 126:

****) Նույն, էջ 144:

*) Պ. Բեն. Մամիկոնեան. — Ռումանահայոց ներկայն և ապագայն, Կալաց, 1895, էջ 119-120:

կերտուհիներու պակասեն կառուցվելիք շենքեր երկար ժամանակ կիսատ մնացած ըլլալով մեր դարու սկիզբը բոլորովին քանդվեցաւ: *) Ներկայիս հետքն իսկ չկա այս շինութեան ու ոչ իսկ նախկին եկեղեցւոյն արձանագրութեան բարը կերևաւ:

Սուլէն ձեռագիրը ունի գունազեղ խորան մը սկիզբը, ինչպես նաև նրբաճաշակ լուսանցադարձեր ու թռչնադիր սկզբնատուներ, որոնց գծողը հավանաբար օգտւած պետք է ըլլա քիչ առաջ Նիշված 1351-ին գրված, ինչպես և 1451-ին դարձյալ Յաշի մյուս եկեղեցւոյն նվիրված ավետարանի լուսանցադարձերն, քանի որ նույն ոճը ու նույն գույները կտեսնվին:

10. Եւրակնոց.— գրված 1640-ին Կ. Պոլսո մէջ:

11. Ճաշոց.— ընտիր մագաղաթյա, գրված 1667-ին Կ. Պոլսում. Փիլիպոս քահանայի կողմէ, Տեր Հովհաննեսի և Տեր Պողոսի համար: Ձեռագիրը երկու գեղեցիկ խորաններ, շուրջ տասր կիսախորաններ, ճաշակավոր սկզբնատուներ ու լուսանցադարձեր և շատ փոքր մանրանկարներ ունի: Նվեր ստացված է Պուքրեշի ավագ քահանա Տեր Իգ. Քիլիմյանէ: Ինչպես ցույց կուտա վերջինիս հիշատակագրութունը, 1917-ին զայն գնած է Դամասկոսին մէջ:

12. Տոնացույց և Պարգատումար.— գրված 1613—1622:

13. Ավետարան.— գրված 1712-ին, Մարաշ, Զաքարիա քահանայի կողմէ, Տեր Հովսիկի համար. նվիրված է դարձյալ Տ. Իգ. Քիլիմյան ավագ քահանայի կողմէ:

*) N. A. Bogdan.— Orasul Jasi, Jasi 1913, p. 240:

14. Ավետարան.— քրքրված ու պակասավոր, գրված հավանաբար Յաշ: Պատկանած է Յաշի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցւոյն. գրված է Ռ. Մ. թվականին. հաջորդ տառերը պատուված են:

15. Խորհրդանշան.— գրված 1680-ին.



Խորան 1667-ին Կ. Պոլիս գրված ձեռագիր Ճաշոցի
(«Հայ Մշակույթի Տուն»)

Գևորգ դպիրի կողմէ, նորընծա Գրիգոր քահանայի համար: Պատկանած է Սուլավայի թաղականութեան:

16. Տոնացույց.— գրված 1660-ին:

17. Քարոզագիրք.— գրված 1759-ին, Նալլան պատրիարքի կողմէ, ուր ամփոփված են իր խոսած քարոզները: Նվիրված է Տ. Իգ. ավագ քահանայի կողմէ:

18. Բժշկարան. — երկու հատոր, տառնց հիշատակագրություն: Նվիրված է բանաստեղծ Զ. Պլպուկին:

19. Զանազան հատորներ. — գրված Պուրբեշի հայոց նախկին առաջնորդ Գևորգ և պիսկոպոս Էդեսիցի կողմից 1820—1843-ին:

20. Զանազան բարոզներ նդիսաբեթուպուիս հայաբաղաբի ժողովրդական Տ. Հովհաննես Գապտեպովյանի կողմից 1819—1830-ին գրված:

21. Գիրք որ կոչի կշիռ արդարութեան. — երկասիրություն Պետրոս արքեպիսկոպոս Նախիջևանցիի, գրված 19-րդ դարու սկզբին:

22. Երկասիրություն. — Պոթոշանի հայոց երբեմնի վարժարանի տեսուչ Նիկողայոս Զեննեյանի, 1870:

23. Կոմս Մոնթե Բրիսո. — Թարգմ. 1865-ին, երկու հատոր:

24. Թագմաթիվ հատորներ ուսմանահայոց երբեմնի ուսուցիչ Մարտիրոս Զերեբեյանի երկասիրություններին, 1845—1903, Յոթշան — Պուրբեշ:

25. Ազգային պատմություն. — դասավանդված 1896-ին նդիշե վարդապետ Դուրյանի կողմից Արմաշու դպրեմանքին մեջ:

26. Դարեբաց Հայոց Մատենագրության պատմություն. — (վրձագիր), 1908 Թիֆլիզ կազմված Ստ. Մալխասյանի դասախոսություններին:

27. Պատմություն Հայ Մատենագրության — գրված 1904-ին, նդիշե վարդապետ Դուրյանի դասախոսությանց ամփոփում:

28. Հավաքածու տետր Գր. Անուշի 1768—1828. — այլազան բովանդակությամբ բազմաթիվ նյութեր: Արեւելահայ գրագետ վրթ. Փափաղյան 1914-ին Պուրբեշի Ազգային վարժարանի տնօրենին ըլլալով և ձեռք անցնելով վերոհիշյալ հավաքածուն, անկե քաղեր էր թիվ 40 երգիծական կտորը՝ «Իրամի հաւատամք»-ը և լույս ընծայեր Թեոդիկի «Ամենուն Տարեցոյց»-ին մեջ^{*)}: Տարիներ հետո Մատենադարանի վարչության երբեմնի նախագահը իր ամսաթերթին մեջ «Կորսուած ձեռագիր»^{**)} վերնագրին տակ ցավ կհայտնէր, թե Վ. Փափաղյանի հիշած սույն ձեռագիրը կարելի չէ եղած վերնահարկէն գտնելով ձեռագիրներուն մեջ գտնել, սակայն հանգուցյալ Վ. Մեղտուճյան իրականին մեջ շփոթության մատնված է:

29. Բարոզ կիւրակէից. — հատոր Բ գրված 1848-ին, գրիչ և հեղինակ Կարապետ արքեպիսկոպոս Կ. Պոլսո:

30. Գիրք Մատենի-հեագայն պատմու-

թեանց Հովսեպոս Փլափիտեոսէ երայեցայ.

— գրված 1761-ին, հավանաբար Կ. Պոլս. գրիչ և թարգմանիչ Տայի Սիմոնյան Աթանաս վարդապետ: Նվիրված է Վ. Երիցյանի կողմին:

31. Ողբ ի վերայ Օլխաց երկրի հայերուն. — հեղինակ Մինաս սարկավագ Թոխաթցի (1551), գրիչ Խաչատուր Հորմանց Կերացի տիրացու և վարժապետ, 1830-ին:

32. Թամիրա Կուրածին և Յայրաւանեան Մուգայից գրկեալ ի քնարէ. — գրված է 1832—1845-ին, Միսկիվ — Պուրբեշ. գրիչ և հեղինակ Խաչատուր Գրիգորյան — Սահակյանց: Ամբողջ ձեռագիրը, սկզբին մինչև վերջ, պաշտպանողական գրվածք մըն է «Մուգայք Արարատեան» հատորին, որուն աշխատակիցներէն մին էր հավանաբար նաև այս ձեռագրին հեղինակը: Ան պատասխան մըն է Վենետիկի «մի ոմն լանանուն արեղալի, ախտացեալ զամօթալի ոգի», որ արատավորներ էր վերոհիշյալ հատորի երևումը:

33. Պատմութիւն Պղնձէ քաղաքին. — գրված 1831-ին Բարսեղ Խալաշե (հավանաբար Ալաշ). գրված պետք է ըլլա Սուլաւլայի մեջ: Նվիրված է Գնիլ քահանա Մանդալյանի կողմին:

34. Պատմութիւն Հայոց Յոհաննու կաթողիկոսի. — գրիչ, ժամանակ, տեղ անհայտ:

35. Գիրք որ կոչի աղբիւր բացեալ (Մեկնութիւն Առակաց Քրիստոսի). — երկասիրություն նախիջևանցի Պետրոս վարդապետ Աղամալյանի, 1821. գրված է հավանաբար էջմիածին:

36. Աղօթագիրք. — գրված 1848-ին Գր. Սարգսյանցի կողմին Պրաշովի մեջ:

37. Զանազան հայատառ թրքերին երկասիրությունը Տ. Ղևոնդ քահանա Փափաղյանի:

38. Երեսուն քարոզներ Թրանսիլվանիո հայ ժողովրդապետներու (1752—1805):

39. 16 ձայնագրված երգեր, ստորագրված Կարա-Մուրզայի կողմին:

40. Զանազան երկասիրությունը հանգուցյալ Հար. ավագ քհն. Անդրեասյանի:

41. Վայելչագրության տետրակներ Յաշի, Սուլաւլայի հայ դպրոցներին:

42. Արվեստագրության տետր Հակոբ Գրիգորյանի, Պուրբեշ:

43. Վիճակագրությունը էտիրենի, Աղեբսանդրի և Կալացի հայոց. պատրաստված Տ. Ղևոնդ քհն. Փափաղյանի կողմին, 1880—1900:

44. Զանազան երկասիրությունը մոռցված գրող Մ. Տերտերյանի, 1915—1924:

45. Արտաշես Պրլբիլիուի կողմին ձայնագրված երգեր:

46. Համայնի 10×40 մեթր երկար, 18-րդ դարին: Եվ այլն:

^{*)} Թեոդիկ. — Ամենուն Տարեցոյց, 1914 Կ. Պոլս, էջ 169—171:

^{**)} «Ararat» ամսաթիւր, 1930, թիվ 108:

Բ. ԿՈՆԴԱԿՆԵՐ

Մատենադարանի մեջ կան ձեռագիր գեղեցիկ կոնդակներ հետևյալ կաթողիկոսների ու պատրիարքների.

Ղուկաս կաթողիկոս (1792), Եփրեմ կաթողիկոս (1818), Գաբրիել պատրիարք Երուսաղեմի (1826), Կարապետ պատրիարք Կ. Պոլսո (1829), Հովհաննես կաթողիկոս (1839), Հակոբ պատրիարք Կ. Պոլսո (1839),

Ստեփաննոս պատրիարք Կ. Պոլսո (1840), Աստուածատուր պատրիարք Կ. Պոլսո (1841), Մատթեոս պատրիարք Կ. Պոլսո (1848), Ներսես կաթողիկոս (1851), Նսայի պատրիարք Կ. Պոլսո (1833), Գևորգ Ե կաթողիկոս (1920): Կան նաև բազմաթիվ տպագիր կոնդակներ:

Գ. ՆԱՄԱԿՆԵՐ

Դարձյալ ձեռագրատան բաժնին մեջ թղթածրարներու շարքին կգտնվին կարևոր թիվով նամակներ, որոնցմէ հիշենք Եփրեմ կաթողիկոս (1807), Ներսես Աշտարակեցի (1829—1844), Կարապետ պատրիարք (1821, 1831), Աստուածատուր պատրիարք (1843), Հակոբ պատրիարք (1849, 1857), Պողոս պատրիարք (1864, 1871, 1873), Հարություն պատրիարք (1885), Իզմիրլյան պատրիարք (1908): Կան նաև երկար շարք մեր նամակներու, բարձրաստիճան հոգևորականներու կողմէ գրված, որոնք հովուած են ուսման հայ թեմը, ինչպես Գր. արքեպիսկո-

պոս Զաքարյան (1812, 1825), Խաչատուր վարդապետ (1840), Գևորգ արքեպիսկոպոս (1843), Ղուկաս արքեպիսկոպոս (1849) և այլն: Կան նաև նամակներ ալ զանազան հոգևորականներու կողմէ գրված, որոնք իբրև այցելու հովիվ կամ նվիրակ այցելած են ուսման հայ թեմը, ինչպես օրինակ Մկրտիչ վարդապետ (1818), Մարկոս վարդապետ (1829), Գևորգ վարդապետ (1829), Գևորգ վարդապետ ուսմանցի (1834), Մարկոս եպիսկոպոս (1833, 1836), Խորեն Նարպեյ (1880) և շատ ուրիշներ:

Դ. ԲՂԹԱՄԻՐԱՆԵՐ

Ձեռագրատան մեջ գետեղված կան նաև ուսման հայ դպրոցներու, հին ընկերություններու, ինչպես նաև հանրային դպրոցներու ու դեմքերու վերաբերող թղթածրարներ, որոնք անսպառ նյութ կարող են մատակարարել ուսման հայ պատմության համար: անոնցմէ հիշենք Յաշի, Սուլափալի, Ռոմանի, Պուրբեշի վարժարաններին (1843—1889), Պուրբեշի հետևյալ ընկերություններին՝ «Արարտեան» (1838), «Արարատ ուսման սիրաց» (1843), «Ուսման սիրաց» (1871), «Հայաստան» (1879), «Արարտեան» (1886), «Հայրենասիրաց» (1887), «Արաքս» (1901), «Առևտրական» (1903), «Ուսման սիրաց» (1905), «Հայ երիտասարդաց» (1920), «Հայ տիկնանց» (1925—1927), և այլ զանազան միություններ: Աստուածատուրյան տետրակներ ուսման հայ որբանոցի Կեդրոնական վարչության (1923—1925), Ռոմանահայ Միու-

թյան (1918—1921). կան թղթածրարներ Յաշի «Աղգասիրաց» ընկերության, Սուլափալի «Ողորմածաց» և «Անի» ընկերություններու, Ռոմանի «Հայ Երիտասարդաց» ընկերության (1862), Պոթոշանի «Հայաստանի Զաւակների Միության» (1887), ինչպես նաև ուսման հայ թեմի հիմնադրության (1931), Հայոց քաղ. իրավունքներու (1857), կաթողիկոսական ընտրությանց. խնդիրներու (1885 և 1892), Հայկական խնդրի, 1906-ի ցուցահանդեսի և այլնի մասին:

Կան թուղթեր նաև Վ. Մեշտուճյանի, Հուսիկ արքեպիսկոպոսի, Գր. Թրանքու Յաշի, Ղևոնդ քհն. Փափազյանի, Օհան քհն. Մանդակունիի, Հովհաննես խան Մասհայանի, Փոփովիչներու, Գեորգե Ասաքի վերաբերյալ և այլն: Նամակներ ալ կան Պողոս Նուպարի, Ֆրետերիք Մակլերե, Յոն Բարաչիալե և այլն:

Ե. ՖԵՐՄԱՆՆԵՐ ԵՎ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐ

Մատենադարանին մեջ կապահովին 7 սուլթանական ֆերմաններ (1802—1812) և 3 ուսման իշխանական հրովարտական, որոնցմէ մեկը կվերաբերի Պուրբեշի թաղականու-

թյան վաճառքին (1820), երկրորդը՝ պուրբեշի Կարապետ Անուշին տիտղոս շրջնորդելուն, իսկ երրորդը՝ Մուսափիո հայ դպրոցներու պետականացման (1841):

Զ. ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ ԵՎ ՔԱՐԵՂԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռագրատան բաժնին մեջ կգտնվին նաև հանգուցյալ ժերակուտական Տոնիկ Սիմեոնյանի անձնական թղթապանակը, Պուրբեշի

առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոսի կտակագիրը (1843), Պուրբեշի Աղգալին վարժարանի հիմնադրության արձույթ (1817), «Ալր

անուն Յիսուսի» ընկերության աջար (1864), Պոլոժենիայի պատճեն (1836), Պլյուզիտուն-րու դատին վերաբերյալ հիշատակագիր (1834), Յաշի ազգային կանոնադրության պատճեն (1840):

Թանգարանի բաժնին մեջ կան արձանագրության քարեր Պուքրեշի հայոց եկեղեցվո (1781) և «Սէր անուն Յիսուսի» ընկերության (1849):

«ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ» ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱԺԻՆ

Ա. ԽՈՐԱՆԻ ՎԱՐԱԳՈՒՅՐՆԵՐ

Մուտավիտ զանազան եկեղեցիներն բերված ու ցուցադրության համար Թանգարանի մեջ զետեղված խորանի մեծ վարագույրները, իսկապես, ամենահետաքրքիր մասը կկազմեն Թանգարանի բաժնին: Սույն վարագույր-

վարպետներու կողմն, մեծ հմտությամբ ու յարմարությամբ: Փայտի վրա փորագրելով կրոնական զանազան նկարներ, անոնք այնուհետև այդ նկարները կտպեն հյուսված քեղեցիկներու վրա. այս կերպ կպատրաստվեն հայ եկե-



Խորանի մեծ վարագույր Ֆոհշանի հայոց եկեղեցիեն, շինված 1757-ին
(«Հայ Մշակույթի Տուն»).

ները հայ արվեստի տարբեր մեկ ճյուղին արտագրություններն են, որ ծաղկած էր ի մասնավորի XVI, XVII և XVIII դարերուն, Թոքատի, Կ. Պոլսո և Հնդկաստանի հայ գաղութներուն մեջ: Անոնք կպատրաստվեն հայ

վեցիներուն գեղեցիկ վարագույրները. հարուստ նվիրատուների կողմն պատվիրված ըլլալով այս կամ այն եկեղեցվո համար, այդ վարագույրները երկրորդ օրինակն ունենալ չեն կարող, ուստի վարպետները հատ մը

պատրաստելի վերջ կավրենի իրենց տնա-
ջան աշխատանքի արդյունք փորագրություն-
ները: Դեռ այսօր ալ տակավին իրենց վառ
գույները պահած գեղեցիկ սույն վարա-
գույներու ներկերը կպատրաստվեն հայ
ձեռագիրներու, մանրանկարներու և հայ գոր-
գերու համար գործածվող ներկանյութեր, ո-
րոնք կստացվեն որթան կարմիրն ու զանա-
զան բազմաթիվ բույսերն: Այս վարագույր-
ները իրենց պատկերներու ալլազան ձևի
հղացումներով, գույներու ներդաշնակու-
թյամբ, ներկերու բարձր որակով, կատար-
ման արվեստի նրբությունը, շուտով մեծ
համբավի արժանացան: Արվեստի քննադատ
Գր. Զամպալդյան՝ իր մի հոդվածին մեջ
վարագույրներու մասին կըսե թե «Թո-
քատի, ինչպես նաև Փոքր Ասիո հայկական
վայրերու, հայ վարպետները ինքնատիպ ոճ
մը ստեղծեց ինչ, և որ ան ավելի կպատ-
շաճեց խոնարհողի, հավատացողի ու ա-
պաշխարհողի կրոնական զգացումներուն,
նպատակ ծառայելով մտամփոփման ու հո-
գիի վերականգնման: Իսկ Կ. Պոլսո մեջ վարպետ-
ները, ներշնչված Մեծ Մետրոպոլիսի բազ-
մարվեստյան խառնուրդին, իրենց գործերը
արևմտյան արվեստի ազդեցությունն ալ կը-
կրեն: Անոնք կյուրացնեին արևմուտքի
տեքնիկ միջոցները և կտարվեին արտառոց
արվեստի հմայքն: Այնպես որ այս վար-
պետներու կողմն տպված վարագույրները, ե-
թե որոշ հմայքի մը կամ շքեղության մըն ալ
հասած ըլլան, զուրկ են հետաքրքրական և
հատկանշական ըլլալեն»:

1. Մեծ վարագույր Ֆոֆշանի հայոց եկե-
ղեցիին. — Ռուսաճիա գտնված ամենագեղե-
ցիկ ու հատկանշական վարագույրն է, որ կը-
կրե հայոց 1206 (=1757) թվականը և նը-
վիրված է Ֆոֆշանի հայոց Ս. Աստուածա-
ծին եկեղեցվույն, իբր հիշատակ, Ապոթեկ
Աստվածատուրի որդի Հաճի Իլիասի, յուր
զավակաց, ծնողաց ու Մաղիկ անուն կնոջ
կողմն: Գոց կապույտ խորագույնի մը վրա,
15 մետալիոններու մեջ, ներկայացված է
Հիսուսի կյանքին առնված զանազան դր-
վագներ, որոնցմե մեկ քանին, ինչպես կըսե
Գր. Զամպալդյան, «օրինակ Հիսուսի
խաչելությունը, խաչեն վար առնվելը, գլուխ
գործոցներն ան ու վարագույրին դիմաց կե-
ցողը հոգեկան միաթիք խորունկ զգացում
մը կունենա: Ընդհանուր վարագույրին ունե-
ցած շափավոր ու ծանր ներդաշնակությունը
արդյունք է գոց ու բաց կապույտ գույներու
միացման և դեմքերու դեղնորակ նարնջա-
գույնին»: Իր 15 մետալիոնները կներկա-
յացնեն. — 1. Ավետումը, 2. Քրիստոսի մը-
կըրտությունը, 3. Ունապուտան, 4. Գեթսեմա-

նիի պարտեզի վերջին աղոթքը, 5. Հիսուս
Պիղատոսի առաջ, 6. Հիսուսի շարժարանք-
ները, 7. Նույնը, 8. խաչելությունը, 9. խաչեն
վար առնվելը, 10. Հարությունը, 11. Գերեզ-
մանի այցելությունը, 12. Ս. Հոգիի գալուս-
տը, 13. Համբարձումը, 14. Այլակերպու-
թյունը, 15. Ս. Միածնի դեպի երկինք փո-
խադրումը:

Այս հրաշալի վարագույրը, որ բոլոր այ-
ցելուներու կողմն սքանչացման արժանա-
ցած է, դժբախտաբար մեկն է եղած հաս-
տատության ամենատառապած գույքերն:
Թանգարանի բաժնին մեջ եղած բո-
լոր վարագույրները, ի մասնավորի սույն
գեղեցիկ վարագույրը, որ շրջանակ ալ ունի,
պետք է շուտով ապակիով ծածկվին, զա-
նոնք փչացումն գերծ պահելու համար:

2. Երկուրդ մեծ վարագույր Ֆոֆշանի եկե-
ղեցիին. — այս գոց կարմիր և գոց կանաչ
վարագույրը երեք գլխավոր նկար ունի. —
Հիսուս մանուկը ու երեք մոգերը, խաչելու-
թյունը և մկրտությունը: Շուրջը ունի բազ-
մաթիվ գեղեցիկ զարդեր ու մետալիոններու
շարք մը՝ սուրբերու, մարգարեներու, առաք-
յալներու նկարներով: Կկրե հայոց 1265
(= 1816) թվականը և նվիրված է Ֆոֆշանի
Ս. Աստուածածին եկեղեցվույն շումլացի
Հաճի Հակոբին, Մուրատի և խաչատուրի օգ-
նություններով:

3. Երրորդ մեծ վարագույր Ֆոֆշանի հա-
յոց եկեղեցիին. — սա գոց կարմիր խորա-
գույնի վրա ունի արձանագրություն մը, որ
կըսե թե վարագույրը հիշատակ է Ֆոֆշանցի
Ալեքսանի որդի Հաճի Վարդանեն և Հաճի
Ավետիսեն, նվիրված է Ս. Աստուածածին
եկեղեցվույն հայոց 1230 (= 1781) թվա-
կանին, պատրաստված է Թոքատ, Հակոբի
կողմն, որն ինքզինքին վայ կուտա ու զինք
կանվանի խեղճ ու մեղապարտ Հակոբ, քանի
որ իր սիրելի որդի Ավետիք տիրացուն, 26
տարու, մեռած է ժանտախտն 1229-ին
(1780) և այլն:

4. Յալի հայոց եկեղեցվույն մեծ վարա-
գույրը. — սա բաց գույնի է, մասամբ տպա-
գրված, մասամբ ալ գծագրված. կկրե ար-
ձանագրություն մը, որ կըսե թե ան նվիր-
ված է Յալի Ս. Աստուածածին եկեղեցվույն
21 մայիս 1840-ին Աղա խաչիկին, ի հիշա-
տակ յուր ծնողաց՝ Ասատուրի և Մարիամի:
Գծված է Կ. Պոլս Անաճիայի կողմն: Վա-
րագույրին մեջ տեղի նկարը կներկայացնե
Ս. Հակոբա վանքը. շուրջն ունի երկու շարք
երեքական նկարներ, որոնք կներկայաց-

նեն— 1. Ս. Հակոբա գլուխը Աստուածամոր բերվիլը, 2. Ս. Հակոբա մարմնույն բարձրացումը հրեշտակներուն կողմեն, 3. Ս. Հակոբա գլխատումը, 4. Ս. Հովհաննես իր ավետարանը կրթեն, 5. Ս. Հովհաննես ավետարանի իր գերեզմանը կրթեն, 6. Ս. Հովհաննես ավետարանի իր գերեզմանին մեջ կհան-

կաղապարի վրա տպագրված ըլլալն, յուզաներկի հետքեր ալ ունի: Ինչպես կարելի է նշմարել հայկական կրօնական արվեստի մյուս ճյուղերուն մեջ ևս, արևմտյան նմրուպայի արվեստի հպումը աղավաղած է մեր ոճը ու եթե մեր վարպետները փորձած են ընդարձակել իրենց ձևաոճի ճշգրտակը,



Խորանի մեծ վարագույր Յաշի հայոց եկեղեցիէն, շինված 1840-ին
(«Հայ Մշակույթի Տուն»)

գրստանա: Գր. Զամպաբճյան այս վարագույրին մասին կգրեն. «Յաշի վարագույրը իր մեջ կապահ հատկանշական դիժերու խառնուրդ մը և պատրաստված է Կ. Պոլսո մեջ, Անանիա անուն վարպետեն, 1840-ին և այնպիսի տեքնիքով մը, որ բացի փայտյա

փոխարեն սակայն կորսնցուցած են իրենց ինքնատիպութիւնը ու ավանդական ձևի արտահայտիչ զգացումը»:

Կան նաեւ խորանի երկու մեծ և երկու փոքր վարագույրներ բերված Սուշավայի հայոց եկեղեցիէն:

Բ. ՆԱԱՐՆԵՐ

Թանգարանի գլխավոր զարդն է իտալացի համբավավոր նկարիչ Թիթո Պասսանոյի «Քրիստոսի ծնունդը» մեծ նկարը, որ նվիրված է, ինչպես ուրիշ տեղ մը ըսինք, օր. Զինքա Թադոսի կողմէ: Կան նաեւ զանազան նկարներ կարգ մը նկարիչներու, ինչպես Թ.

Վեք, Թ. Ֆրեր, Հ. Մելիք, Էտկար Շահին, Գ. Շիլթյան, Վ. Սուրենյան, Ե. Արյան, Մ. Մսերյան, Հ. Ավագյան, Բ. Վարդանյան, Արամիկ և այլն: Կան բազմաթիւ դիմանկարներ ալ զանազան ուսմանահայ հին դեմքերու:

Գ. ԴՐԱՄՆԵՐ

Թանգարանն ունի դրամներու փոքրիկ հավաքածու մը. այստեղ կան հինգ արծաթյա դրամներ Հեթում և Ղևոն կիլիկյան հայ թա-

գավորներու, ինչպես նաև օտար՝ պարսկական, հունական, հռոմեական ու այլ, դրամներ:

Դ. ՍՐԲԱՆՈՐՆԵՐ ԵՎ ՍՐԲԱՊԱՏԱԿՆԵՐՆԵՐ

Այս շարքին մեջ զետեղված են ռումանահայ եկեղեցիներեն հավաքված զանազան առարկաներ, որոնց մեջ սեղանի հին ֆիլիկրան խաչ մը, ոսկեթելով ասեղնագործված քահանայական հին թագ մը՝ Ռոմանի եկե-

ղեցիեն, ավետարանի արծաթ կողեր՝ Յաշի ու Ռոմանի եկեղեցիներեն և հայկական բաղմամբով սրբապատկերների՝ Սուշավայի, Յաշի, Յոքչանի և Պուրբեշի եկեղեցիներեն:

Ե. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՆԴԵՐՁՆԵՐ

Թանգարանի բաժինն մեջ կան նաև բաղմամբով եկեղեցական հանդերձներ, որոնց մեջ հանգուցյալ Հոսիկ արքեպիսկոպոսի եպիսկոպոսական հանդերձանքը, ինչպես նաև շուրջառնի ու դպրական շապիկներ՝

հավաքված Մուլտավիո հայոց եկեղեցիներեն:

Ասոնցմե զատ թանգարանն ունի բաղմամբով հայկական ձեռագործներ և զանազան լուսանկարներ:

«ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ» ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲԱԺԻՆ

Ա. ՀԱՅ ՀԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ հին գիրքերու ավելի քան 200 հատորներ կան XVII—XIX դարերուն տպագրված. ասոնցմե հիշենք Աստուածաշունչը՝ տպված Ամատերդամ 1666-ին: Աշխարհագրութիւն Մովսէսի Խորէնացույ և Աղուէսագիրք՝ տպ. 1668-ին Ամատերդամ, Պատմութիւն Առաքել Դարիժեցույ՝ տպ. 1669-ին Ամատերդամ, Պարզատումար մշտնջենական՝ և արհեստ համարողութեան՝ տպ.

1676-ին Մարտիլիա, Ավետարան՝ տպ. 1685-ին Վենետիկ, Խորհրդատետր՝ տպ. 1686-ին Վենետիկ, Ճաշոց՝ տպ. 1686-ին Կ. Պոլիս, Պարզաբանութիւն հոգեհոսագ մաղմուսաց՝ տպ. 1686-ին Վենետիկ, Գիրք Թովմայի Գեմբեդայ՝ տպ. 1691-ին Կ. Պոլիս, Գիրք Խոստովանութեանց՝ տպ. 1698-ին Կ. Պոլիս, Նարեկ՝ տպ. 1701-ին Կ. Պոլիս և այլն:

Բ. ԱՆՁԵՈՒՆՄԵՆԼԻ ՖՈՆԴ

Գրադարանի գիրքերու մեծ մասը, ի մասնավորի այն գիրքերը, որոնցմե մեկ-մեկ օրինակ կգտնվին գրադարանին մեջ, դուրս չեն տրվիր, ի բաց առջալ կարևոր պարագաներն և այն ալ վարչության հավանությամբ: Բացի հին տպագրությունների գրադարանն ունի նաև հետևյալ բաժինները. — 1. Հայագիտական (պատմություն, աշխարհագրություն, տեղագրություն, հայ պատմիչներ), 2. Թարգմանական (գրաբար և աշխարհաբար), 3. Կրոնական-վարդապետական, 4. Դասագիրքերու, տեղեկագիրքերու և կանոնադրություններու, 5. Հայ գրականության (վեպ, պատմվածք, չափածո, կենսագրական, թատերախաղ, երգարան, հայկական հարց), 6. Հայ և օտար բառարաններու ու համայնագիտարաններու, 7. Սովետական Հայաստա-

նի (վեպ, պատմվածք, չափածո, թատերախաղ, ակադեմիական հրատարակություններ և այլն), 8. Հայագիտական՝ օտար լեզուներով (ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, հունգարերեն, լատիներեն, իտալերեն և այլն), 9. Օտար հին տպագրություններու, 10. Երաժշտական (Սովետական Հայաստանի և այլ երգեր), 11. Ռումանահայ գաղութի (ուր ամփոփված են Ռումանիա տպագրված հայկական գրքերեն կարևոր մաս մը, ռումին հեղինակներու հրատարակություններ հայոց մասին և ծագումով հայ հեղինակներու գործերը, որոնք կապ չունին հայոց հետ, օրացույցներ, կանոնագրություններ, տեղեկագրություններ, թուղթիկներ, տոմսեր և այլն), 12. Աշխոյժներու ու շքեղ հրատարակություններու և այլն:

Գ. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴՈՒՐՍ ՏՐՎԵԼԻՔ ԳԻՐՔԵՐՈՒ ԲԱԺԻՆ

Այս բաժինն մեջ կմտնեն բոլոր այն գիրքերը, որոնցմե գոնե երկու օրինակ կգտնվին գրադարանին մեջ: Այս շարքին մեջ կան հայկական մեկ, պատմվածք, շափածո, կեն-

սագրական, տարեգիրք և այլն, ինչպես նաև ուսմաներեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն ու այլ լեզուներով գիրքեր:

Դ. ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԲԱԺԻՆ

Ավելի քան 150 տեսակ պարբերական, թերթ ու տարեգիրք ունի՝ գրադարանի այս բաժինը, որոնց մեջ կգտնվին կարևոր օրինակներ Վենետիկի «Դիտակ Բիւզանդեան»-են (1813), Զմյուռնիայի «Շտեմարան պիտանի դիտելիս»-են (1839), դարձյալ Զմյուռնիա-

Աւարայրի»-են (1866), Էջմիածնի «Արարատ»-են (1868—1916), Կ. Պոլսո «Լատան»-են (1870), Երուսաղեմի «Սիոն»-են (1874), Թիֆլիսի «Փորձ»-են (1876—1881), Մոսկվայի «Փարոս Հայաստանի»-են (1881), Թիֆլիսի «Աղբիւր»-են (1883) ու «Արձադանք»-են (1886, 1888), Զմյուռնիայի «Ա-



«Հիսուսի ծնունդը»

Գործ Թիքո Պասսաւնոյի

(«Հայ Մշակույթի Տուն»)

յի «Արշալոյս Արարատեան»-են (1841), Վենետիկի «Բաղմավէպ»-են (1843-են սկսյալ, պակասաթիւր), Թեոդոսիո «Մասեաց աղանի»-են (1860—1866), Մոսկվայի «Ճոքաբաղ»-են (1860), Թիֆլիսի «Կոունկ»-են (1862), Կ. Պոլսո «Կիլիկիա»-են (1863), Կ. Պոլսո «Երեւակ»-են (1865), Կ. Պոլսո «Միլի-

րեւելյան մամուլ»-են (1883—1890) և այլն:

Կան շատ ուրիշ թերթեր ալ տպագրված Սովետական Հայաստան, Ռուսաստան, Արևելք, Վիեննա, Պետերսպուրկ, Թիֆլիս, Լոնդոն, Վաշինգտոն, Փարիզ, Գահիրե, Ժնև, Պերլին, Պարիս, Նյու-Յորք, Պոսթոն, Սոֆիա, Ֆրեդերիկ, Անթիպիա և այլ վայրեր:

Ե. ՆԵՐՔԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Գրադարանին մեջ կա ներքին մնայուն ընթերցարան մը, ուր սեղաններուն վրա դե-

տեղված են հայաստանյան և գաղութահայ թերթեր ու պարբերականներ. ասոնցմե հի-

շենք «Սովետական Հայաստան» օրաթերթը, «Սովետական Հայաստան», «Սովետական գրականություն և արվեստ» ու «Էջմիածին» պարբերականները, իսկ գաղութներին «Հայաստանեան Ժակատ», «Ժողովուրդ», «Ֆիլատ», «Զարթոնք», «Երևան», «Լրաբեր», «Հայաստանի կոշնակ», «Հայ մամուլ», «Բազմավեպ», «Հանդէս ամսօրեայ» և այլ բազմաթիվ թերթեր ու պարբերականներ: Սույն ընթերցաբանին մեջ ընթերցելու համար փափաքողներուն կտրվին անձեռնմխելի ֆոնդին դիրքեր, հին պարբերականներու ու թերթերու հավաքածոներ և ալպոմներ:

Ներափակելով Ռուսաստանի հայոց մտքի գանձարան «Հայ Մշակույթի Տան» նվիրված սույն հոդվածը, պետք է ըսենք, թե ան, իր գոյության 20-ն ամսի տարիներու ընթացքին, հետը հաշված Ռուսաստանի կեդրոնական Մատենադարանի գործունեության ալ շրջանը, թեև համեստ, բայց իր տեսակին մեջ կարևոր ու եզակի դեր մը խաղացած է այս գաղութին կյանքին մեջ: Ան ամբողջ Պալքանյան հայ գաղութներու մեջ եզակի հանդիսա-

ցած է ու կհանդիսանա, որպես հայ մտքի մշտավառ ջահ մը, ան անխոնջ կաշխատի ռուսաստանագիտությունը հաղորդակից ընել Սովետական Հայաստանի հզոր վերելքին և համախմբել ռուսաստանի հատվածին անոր շուրջը: Ան ջանք չէ խնայած կորստե փրկելու համար հայ մշակույթին հետ առնչություն ունեցող մնացորդ ցանուցիր բեկորները, ռուսաստանի գաղութին պատմությանը վերաբերող նշխարները: Ան միաժամանակ գաղութի հայ երիտասարդության համար հայացի դաստիարակության անբաղդատելի վայր մը եղած է ու կմնա այդպիսին: Հուսանք, որ «Հայ Մշակույթի Տուն»-ը, իբրև գաղութին հայ մտքի գանձարանը, այսուհետ ալ շթույացող եռանդով կշարունակե իր, ըստ ամենայնի օգտաշատ ու բեղմնավոր գործունեությունը: Կհավատանք, որ ան, իբրև գաղութին մեջ եղած հայ նշխարներու գլխավոր հավաքավայրը, ջանք պիտի չխնայե թե կորստե փրկվածները անվթար պահպանելու և թե գաղութին մեջ տակավին ցրված շատ մը նշխարներ ի մի ժողովելու համար:

ՍՈՒՐԵՆ ՔՈՒԱՆՋՅԱՆ

Նախկին օգնական-գրադարանագետ Ռուսական հայ կեդրոնական Մատենադարանի (1939—1944) և նախկին քննադատ վարիչ «Հայ Մշակույթի Տան» (1944—1947)

Տպագրելով Ս. Քուանջյանի սույն հոդվածը, խմբագրությունս կարծում է, որ ռուսաստանի եկեղեցական և ազգային-հասարակական կազմակերպությունները, կուլտուրական այս կարևոր օջախը իր իսկական կոչման բարձրության վրա պահելու և այն իրենց գործընկերների առարկան դարձնելու ուղղությամբ, չեն խնայի ոչ մի ջանք:

Միաժամանակ անհրաժեշտ է, հետագա մանրադննհի պրպտումների միջոցով կուլտուրական այս օջախը հետզհետե թե՛ ճոխացնել մշակութային նորանոր արժեքներով և թե՛ այնտեղ հավաքված արժեքները դերժ պահել կորստից, օտարների ձեռքն անցնելուց և, որ ամենագլխավորն է, փչացումից:

Յուրաքանչյուր հայրենասեր հայ մարդու սրբազան պարտականությունն է ամեն կերպ սատարել հայ մշակույթի ու հայ պատմության հետ առնչություն ունեցող արժեքների խնամքով հավաքմանն ու պահպանմանը: Որքան լավ կլինի, եթե ռուսաստանայերի

խրախուսելի նախաձեռնությանը հետևելով, նմանօրինակ մշակութային օջախներ ստեղծվեն նաև մեր մյուս հայկական այն գաղութներում, որտեղ դրանք բացակայում են տակավին: Գաղութագիտությունը Մայր Հայրենիքի հետ կապող օղակներից մեկը հանդիսացող կուլտուրական այդ օջախներում հնարավոր կլինի ոչ միայն կենտրոնացնել հայ մշակույթի ու հայ պատմության հետ առնչություն ունեցող, այս կամ այն գաղութում գտնվող, արժեքները, փրկելով դրանք անդամ կորստից, այլև այդ օջախների շուրջը համախմբելով օտարացման ու խորթացման ուղու վրա գտնվող գաղութագիտության երիտասարդությունը, նրան հաղորդակից դարձնել հայ մշակույթին, արվեստին, լեզվին ու գրականությանը, այսպիսով թե՛ կանխելով օտարացումը և թե՛ նպաստելով ժամանակավորապես պահպանության մեջ գտնվող մեր հայրենակիցների կապերի սերունդմանը Մայր Հայրենիքի հետ:

ԽՄԲ.

